ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2022 թվականի N 1288 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ քաղաք Երևան, Շենգավիթ, Գ. Նժդեհի 20 հասցեում գտնվող, 10561,7 հազ. դրամ սկզբնական արժեքով, 1748 քառ. մետր մակերեսով մասնաշենքը, 436,8 հազ. դրամ սկզբնական արժեքով, 18.8 քառ. մետր մակերեսով ավտոտնակը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 121445,351 հազ. դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 0.20616 հեկտար հողամասը (այսուհետ՝ անշարժ գույք 1) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեից և ամրացնել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությանը:

2. Հայաստանի Հանրապետության պետական սեփականությունը հանդիսացող՝ Երևան քաղաքի Անտառային 188 հասցեում գտնվող՝ 80069,940 հազ. դրամ

սկզբնական արժեքով (վերագնահատված արժեքով), 884.25 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 1210,128 հազ. դրամ արժեքով, 0.06107 հեկտար հողատարածքը (այսուհետ՝ անշարժ գույք 2, սեփականության վկայական N 05082022-01-0112) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունից և ամրացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի տեղակայման նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում լուծել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հետ 2009 թվականի ապրիլի 17-ին կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման N 30/009 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի լուծման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի հետ համատեղ, իրականացնել անշարժ գույք 1-ի հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի հետ համատեղ, իրականացնել անշարժ գույք 2-ի հանձնման-ընդունման աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.08.2022

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ